սրտի, զամենայն խնդիրս կատարէ, ելից եւ զիմ անարժանիս փափագն եւ զիղձս իմ կատարեաց:

Զի եկն քարվան մի մեծ Էնկուրիու զոֆով. կային ընդ նմա եւ վաճառականք հայ. այլ եւ վարդապետ մի Վանական Զաքարիայ անուն: Եւ յետ սակաւ աւուրց ծանօթ եղեալ ընդ միմեանս՝ յորդորէր զիս ընդ իւր երթալ: Եւ ի թվին ՌԿ. յունիս ամսոյ ԺԱ. կոչելով զանուն Աստուծոյ յօդնականութիւն, բազում պատրաստութեամբ ելաք ի ճանապարհ:

Եւ վեց օրն հասաք Էտրնայ: Եւ Ստամպօլայ մինչեւ Էտրնայ ամէնն ֆարշ էր սալարակապ, որ ոտք մարդկան կամ գրաստից ոչ թանար. եւ յամէն իջեւանի բազմածախ, մեծամեծ վիմօք մէջիդնի, խաներ, օտանի, բաղանիք, հիւրանոցք, հիւանդանոցք: Եւ երկու անգամ կերակուր կ՝ելնէ՝ փիլաֆ, զարտա եախնի. եւ երկու ֆոտոլայ հաց: Թող զպախչանին եւ զեղեցիկ սէլվի աղաչնին, չէշմանին եւ անմման ջրերն: Եւ թէ հազար հոգի լինի, գան իջնուն, ուտեն, խմեն, հանգչին ինքեանք եւ գրաստքն. եւ երբ կամին բաղանիք մտնեն եւ ապա գնան: Այլ եւ տեսաք ի ճանապարհին կամարակապ վիմաշէն կամուրջնի, քսան, քառասուն, եօթանասուն ակնէն ի վերայ լայն եւ մեծ գետոց: Եւ էր Էտրնայ թախտ եւ մեծահամբաւ քաղաք, յոյժ